խոպա, բացառութեամբ հիւսիսային և հարաւային պատերի, նաև գաւիթը. Պօղոս-Պետրոսից էլ միայն պատեր են մնացել։

Ամենահին արձանագրութիւնը Իւանէ Աթաբէկինն է, 1212 *թուականից, տարաբաղդաբար մի մասը եղծուած, որից երևում է հողային նուիրաբերութիւն է արել իւր որդի Աւագի երկարակեցութեան համար (Յաւել. Ա.* 120. պատկ. 179*)։ Արձանագրութեան այս թուականը չպէտք է հակասութիւն համարուի Գեղարդի արձանագրութեան ժամանակի որոշման, որ փաստական տուեալների հիման վրայ* 1219–1222 *թ. թ. նշանակեցինք, որովհետև անհրաժեշտ չէ նորա ներկայութիւնը ընդունել արձանագրութեան թուականին այդտեղ։ Սորա շարունակութիւնն է նոյն գծի վրայ և նոյն գրով, ասել է, թէ և նոյն ժամանակ, ոմն Գորգիի արձանագրութիւնը, որով իւր որդոց արեշատութեան համար եկեղեցուն նուէր է տալիս Բաբուռզենի հողը (Յաւել. Ա.* 121. *պատկ.* 179*)։ Մենք ունինք նաև եկեղեցու շինութեան թուականը* 1217 *թուականից, դարձեալ պակասաւոր, որից տեղեկա-*

Պատկեր 178.